



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի
կազմակերպման ձևերը. ինքնաստուգում և
ինքնավերահսկում

Առարկան՝ մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Մկրտչյան Աիդա
Ուսումնական հաստություն՝ Խ. Աբովյանի
անվան հ.84 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման
ձևերը. ինքնաստուգում և ինքնավերահսկում
Եզրակացություն
Գրականության ցանկ

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Արագ զարգացող ժամանակակից աշխարհում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խնդիրը այսօր ամենարդիականն է և պահանջում է նոր արդյունավետության բարձրացման պայման

- Ներկայացնել ինքնուրույն դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև
- Ներկայացնել դասի կառուցվածքն ըստ տեսակների, դասի նկատմամբ ընդհանուր ժամանակակակից մանկավարժական պահանջները
- Ուսուցման գործընթացի պլանավորման ձևի ընտրությունն ըստ դասի նպատակի և խնդիրների
- Ուսումնական գործունեության կազմակերպումը և հիմնական ձևերի առնչությունը աշակերտների անհատական առանձնահատկություններին և կրթական մամակարդակին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Թեմա- Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը. ինքնաստուգում և ինքնավերահսկում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Որո՞նք են սովորողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ձևերը և մեթոդները և դրանք ինչպես են ազդում աշակերտների ունակությունների և կարողությունների վրա:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունեությունը՝ չեն խթանում նրանց ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում: Այդպես աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: Սովորողներին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում սովորողի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Գաղտնիք չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: Այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է համարել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրությունը:

Խաչվող հասկացությունները՝

- ❖ Արագ և ինքնուրույն մտածելակերպ
- ❖ Ժամանակ և մտածողություն:

Չետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Կրթական միջավայր
2. Գրաճանաչություն

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը. ինքնաստուգում և ինքնավերահսկում

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը , այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրույնության ձևավորման նախապայմանն ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն : Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց , այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը:

Ջնացած մանկավարժական մեթոդներն ու տեխնոլոգիաները, դասի անցկացման դաս-դասախոսությունն ձևաչափը ժամանակակից տեխնոլոգիաների և գիտական նորամուծությունների ֆոնի վրա սպառել է իրեն: Նախկին մեթոդները այլևս արդյունավետ չեն: Դասի արդյունավետ անցկացման և դասի նպատակների հասնելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հևարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հևարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց, աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն

այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն):

Ակտիվ մեթոդները զուգակցվում են իյուլատրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սահիկների հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Փորձը ցույց է տալիս, որ`

- ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով` սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի` արագացնում է սովորողների` գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները¹:

Դասի դաստիարակչական պահանջները իրականացնելու համար ուսուցիչը դնում և լուծում է դաստիարակչական խնդիրներ` բարոյական, գողագիտական, գաղափարաքաղաքական և այլն: Այս ընթացքում աշակերտների տեսածի, լսաշի և դասի ընթացքում կիրառմավ մեթոդների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում են որոշակի կարծիքներ, հայրենասիրական մարդասիրական հայացքներ, բարոյական որակներ, գեղագիտական ճաշակ և այլն:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը` միջգիտական կապերը: Զանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած

¹ Կ. Թորոսյան, Կ. Չիրուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Չանգակ» հրատարակչություն, 2014 թ., էջ 52

ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»²: Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և ինտեգրացված դասերը; Ինտեգրացված դասերը պիտի տարբերել միջառարկայական կապերը իրականացնող սովորական դասերից, որտեղ ուսումնասիրվում են ոչ թե ընտրովի թեմաներ /ինչպես ինտեգրացված դասերի ժամանակ է արվում/, այլ տվյալ առարկայի դպրոցական ծրագրային նյութերը: Ինտեգրացված դասերը լավ է նկարագրել Ի. Պ. Պողոսյան, գրելով. «Ինտեգրացված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար»³: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և հահակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն 8 գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

² Подласый И. П., Педагогика начальной школы, М. 2000, էջ 233

³ Федосеева В. Н., Кирюшкин Д. М., “Педагогика”, 1972, էջ 20

3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:

Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ. Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է **ինքնաստուգում և ինքնավերահսկում**:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

– Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,

- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի

պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա:

Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:

Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Հարմարվողական տեխնոլոգիայի պայմաններում ուսումը հիմնականում դառնում է ակտիվ ինքնուրույն գործունեություն. Դա պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցումն է, զեկուցումներ պատրաստելու աշխատանքն է, տարբեր բարդության խնդիրների լուծումն է, լաբորատոր և գործնական աշխատանքներն են, անհատական աշխատանքն է ուսուցչի հետ, գիտելիքների ձեռքբերման հսկողությունն է և այլն:

Հարմարվողական տեխնոլոգիան նախատեսում է ստուգման բոլոր տեսակները՝ ուսուցչի հսկողությունը, ինքնահսկողություն, սովորողների փոխադարձ հսկողություն, հսկողություն տեխնիկական միջոցներով և ոչ

մեքենայական հսկող ծրագրերով և այլն: Հակառակ միայն մեկ ուղղությամբ ընթացող հետադարձ կապի (ուսուցիչ - աշակերտ), որը լավ չի իրականացնում ուսուցման գործառնությունը, ներդրվում է բազմալիք հետադարձ կապեր (ուսուցիչ - աշակերտ, աշակերտ – ուսուցիչ, աշակերտ - աշակերտ, ուսուցիչ սովորողների կելեկտիվ, ածակերտ – սովորողների կոլեկտիվ), որը նախատեսում է փոխհարաբերությունների բացառապես այլ ձևեր⁴:

Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի եռությունն այն է, որ սովորողին տրվում է որոշակի թեմայի համար մշակված ուսումնական նյութի փաթեթ՝ մոդուլ, որը սովորողն ինքնուրույն ուսումնասիրում և յուրացնում է: Մոդուլը մի ամբողջություն է, որի մեջ մտնում են թե՛ ուսումնական նյութի բովանդակությունը, թե՛ դա յուրացնելու տեխնոլոգիան: Մոդուլը կազմված է՝

- գործողությունների նպատակային պլանից
- տեղեկատվության կամ նյութի շարադրանքից
- ուսուցման գործընթացը կարգավորող մեթոդական ցուցումներից

Այս տեխնոլոգիան կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները:

Ժամանակակից դիդակտիկայում գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակի դեպքում ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ձևակերպում է այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները:

Երկրորդ մակարդակը առաջինից տարբերվում է նրանով, որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար ձևակերպելու և լուծելու ընդունակություն, իսկ ուսուցիչը միայն նշում է պրոբլեմը:

Երրորդ մակարդակում ուսուցիչը նույնիսկ չի նշում պրոբլեմը: Աշակերտը այն պետք է տեսնի տեքստում ինքնուրույնաբար, ձևակերպի և հետազոտի նրա լուծման հնարավորությունները և եղանակները: «Այս ամենի արդյունքը լինում է այն,- գրում է հոգեբան Վ. Ա. Կրուտեցկին,- որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար տեսնելու, պրոբլեմային իրավիճակն ինքնուրույնաբար վերլուծելու

⁴ Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995. 412 с.

և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն»⁵ : Այսպիսով, երրորդ մակարդակում աշակերտի գործունեությունը լրիվ ինքնուրույն է :

Աշակերտը ինքնաստուգում և ինքնավերահսկման կանոննորին է ծանոթանում ուսուցչի շնորհիվ և ավելի ճիշտ է գնահատում իր ուսումնական գիտելիքները :

Ինքնուրույն վերահսկողությունը և ինքնաստուգումը վերահսկողության հատուկ ձև է: Երբ աշակերտը օբյեկտիվորեն գնահատում է ուսուցչի աշխատանքը: Այստեղ կարևոր է, որ աշակերտները սովորեն աշխատանքը գնահատել ոչ թե մեխանիկորեն, այլ կարողանան հիմնավորել իրենց գնահատականը:

Նախքան դասերի պլանում ինքնաստուգում մտցնելը, ուսուցիչը պետք է երեխաներին փոխանցի ստուգման ալգորիթմները: Օրինակ՝ դուք երեխաներին խնդրում եք փոխանակել նոթատետրերը և ստուգել վարժությունները միմյանց հետ: Սովորողները պետք է ոչ միայն ուղղեն սխալները, այլև արդարացնեն ուղղումը – բացատրեն կանոնը և դրա կիրառման պայմանները:

Յետևաբար, նախ խորհուրդ է տրվում ուսուցչի հետ համատեղ անցկացնել կոլեկտիվ ստուգում: Այսինքն՝ ամբողջ դասարանը լսում է աշակերտի պատասխանը, ապա կատարվում է սխալների կոլեկտիվ ուղղում, ուղղումների համար արդարացումներ են խոսվում: Այսպիսով, երեխաները մտապահում են գործողությունների ալգորիթմը և սովորում գնահատման օբյեկտիվությունը:

Ինքնուրույն վերահսկողության մեթոդները

• **Աշխատանք զույգերով:** Սա ամենատարածված տեխնիկան է: Դուք կարող եք խնդրել աշակերտին գրասեղանի մոտ հարևանի հետ ստուգել տետրում ավարտված վարժությունը, ստուգել տեսական նյութի իմացությունը: Շատ տարբերակներ կան: Այս մեթոդը թույլ է տալիս վերահսկել նյութի յուրացումը, քանի որ զույգերով փոխադարձ ստուգումը կարելի է իրականացնել դասի ցանկացած փուլում. տնային աշխատանքները ստուգելիս, նոր թեմայի կոնսոլիդացիայի փուլում, թեմայի վերաբերյալ գիտելիքների ամփոփում և այլն:

• **Աշխատանք խմբերով:** Այստեղ աշխատելու ավելի շատ տարբերակներ կան:

○ գրավոր աշխատանքների կատարումը: Մեկ ընդհանուր առաջադրանք տրվում է մեկ խմբի: Տղաները առաջադրանքը լուծում են միասին՝ միաժամանակ վերահսկելով իրենց «կոլեգաներին»:

○ բանավոր աշխատանքների կատարումը: Բացի այդ, տրվում է մեկ առաջադրանք և նշանակվում է խմբի գլխավոր խորհրդատու: Խորհրդատուն հարցազրույց է անցկացնում 2-3 հոգու հետ, մնացածը վերահսկում է գնահատման

⁵ Психология: учеб. для пед. училищ / В. А. Крутецкий. - 2-е изд., перераб. и доп. - Москва : Просвещение, 1986, էջ 291

օբյեկտիվությունը: Այնուհետև խորհրդատուի դերը անցնում է մեկ ուրիշ աշակերտի մոտ:

- նախագծի իրականացում: Մի խումբ աշակերտների տրվում է առաջադրանք, որի իրականացման համար կատարվում է մի քանի օր: Այն կարող է լինել վերացական, զեկույց, ներկայացում թեմայի վերաբերյալ, նախագիծ: Կատարված աշխատանքը կներկայացվի խմբից ընտրված աշակերտի կողմից:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված հետազոտական աշխատանքը՝ կարող ենք փաստել, որ ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Աշակերտների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Այսպիսով, ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Չանգակ» հրատարակչություն, 2014 թ.
2. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Չանգակ» հրատարակչություն, 2016թ.
3. Խստովինա Ն. Բ., Տարրական դասարաններում առարկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000:
4. Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995. 412 с.
5. Психология: учеб. для пед. училищ / В. А. Крутецкий. - 2-е изд., перераб. и доп. - Москва : Просвещение, 1986